

բաղեւեղեան գրոհներուն :

Մինչ այդ, այնքան անհանդիստ չէինք : Սակայն, երբ 1920 Ապրիլ եւ Մայիս ամիսներուն անսպասելիօրէն արագ կերպով քայքայուեցաւ ողւս կամաւորական բանակը, ու մնացորդները խճկուեցան Ղրիմի թերակղզին, Հայաստանի գլխին կախուած վտանգը դարձաւ աւելի չօշոփելի եւ իրական :

Դաւակիցները քայլ առ քայլ կը մօտենային իրենց թաքուն ծրագրի իրագործումին : Տակաւին Հայաստանի եւ Սորհրդային բանակներու միջեւ կը մնար Ատրպէճանը : Տաճիկները զանազան խոստումներով համոզեցին մուսավաթականներուն, որ առանց դիմադրութեան անձնատուր ըլլան կարմիր բանակին, որը քայլ մը եւս պիտի մօտեցնէր գիբեհք իրենց գաղտնի նպատակներուն :

Իրապէս ալ կարմիր բանակը քաբելով մըտաւ Բաղու, առանց սեւէ դիմադրութեան հանդիպելու : Քանի մը օր վերջ արդէն վտանգը հասած էր Հայաստանի դռներուն :

Հաւանաբար, Սորհրդային իշխանութիւնը չէր մտածեր թուրքական արշաւանքով մը եւ իր սջակցութեամբ արագ կերպով ջնջել Հայաստանի անկախ գոյութիւնը, զանազան նկատումներով, եւ սխալ փորձէր այլ ճանապարհներով իր կուսակիցներուն ձեռքը յանձնել Հայաստանի իշխանութիւնը, որու միջոցով դիւրին պիտի ըլլար իրագործել զինակցութեան սոյսմանադրութեան թելադրած տրամադրութիւնները, առանց արժուկի եւ առանց ցնցումներու : Սակայն, միւս կողմէն, միլի կառավարութիւնը, որոշած էր պատերազմի պատրաստուիլ՝ համոզուած ըլլալով, որ Հայաստանի անկախութիւնը կրնար գոյութենէ զաղրիլ միայն պատերազմով :

Մուսթաֆա Քեմալ կը յայտնէ, թէ «1920 Յունիս ամսուն արեւելեան շրջանակներու մէջ զօրաչարժ յայտարարեցինք եւ արեւելեան ճակատի հրամանատար նշանակեցինք Քեազիմ Գարապէքիր փաշան» : Սակայն, զօրակոչ յայտարարելը եւ ճակատի հրամանատար նշանակելը արդիւնք կամ հետեւանք կրնար ըլլալ միայն որոշուած ծրագրի մը եւ ոչ թէ հետեւանք պտտահականութեան, այսինքն, առանց պատերազմական կանխորոշ ծրագրի

մը կարելի չէր զօրակոչ յայտարարել :

Հետեւեալ պատմութիւնը ցոյց պիտի տայ, թէ պատերազմի ծրագիրը մշակուած էր շատ աւելի կանուխ, քան 1920 Յունիս ամիսը :

* * *

Նոյն տարուան նոյն ամսու սկիզբները, «Ճակատամարտ»ի խմբագրատան մէջ հանդիպում մը ունեցայ զօրավար քիւրդ Մուսթաֆա փաշային հետ : Յիշեալ զօրավարը այն մարդն էր, որ Յերիտ փաշայի դահլիճի ժամանակ առաջին զինուորական առեանի նախագահն էր. քանի մը ջարդարարներու կախաղանի վճիռ տուած ըլլալուն համար, զայն պաշտօնէն հեռացուցին :

Քանի մը տարիէ ի վեր անձնական ծանօթութիւն ունէի անոր հետ. սակայն, առաջին անգամն էր որ մեր խմբագրատունը կ'այցելէր :

Կը զգայի, թէ այս այցելութեան հետ կապուած պիտի ըլլար ծանրակշիռ պարագայ մը : Փաշան չափազանց մտատանջ կ'երեւնար : Յայտնապէս անհանդիստ էր :

Առանձնացանք սենեակ մը եւ սովորական քարտեղարական կարճ խօսակցութենէ մը յետոյ ինծի յայտնեց, թէ շատ ծանրակշիռ խնդրոյ մը առթիւ ինծի հետ խօսելու համար եկած էր :

— Անշուշտ դուք տեղեկութիւն չունիք, — լսաւ փաշան, — որ միլի կառավարութիւնը որոշած է Հայաստանի դէմ զինուորական արշաւանք մը կազմակերպել, եւ այժմէն իսկ այդ արշաւանքի պատրաստութիւնները (կը տեսնուին արեւելեան նահանգներուն մէջ) : Արդէն զաղանի կերպով այդ շրջանակի զօրակոչը յայտարարուած է : Ճակատի հրամանատար նշանակուած է Քեազիմ Գարա Պեքիր փաշան : Կ'ենթադրեմ, թէ պատերազմը կը սկսի քանի մը ամիս յետոյ :

— Բաց դուք ինչպէ՞ս գիտէք, թէ այսպիսի ծրագիր սենի էնկիւրբի միլի կառավարութիւնը, քանի որ Ձեզի շատ լաւ կը ճանչնան իրբեւ հակաթուրք եւ մասնաւորապէս, Իթթիհատ-Միլի խմբակցութեան սխերիմ հաւաակորդ : Այս հարցումը անոր համար չէ, փաշա, որ Ձեր ճշմարտախօսութեան կասկած ունիմ, այլ պարզապէս կ'ուզեմ Ձեր գիտցած